

ԳԼՈՒԽ Ժ.

1 Յաղագս Կորդուաց, Կորդեաց եւ Տմորեաց:

2 Հարկաներ Մուշեղ սպարապետն եւ զայս զաւառս ապստամբեալս յարքայն Հայոց, զԿորդուս եւ զԿորդիս եւ զՏմորիս. առնոյր գերեր եւ աւերեր, դներ հարկ մնացորդացն, եւ առնոյր պանդանդս:

ԳԼՈՒԽ ԺԱ.

1 Յաղագս Մարաց:

2 Եւ զկողմանսն Մարաց, քանզի եւ նոքա ապստամբեցին յարքայն Հայոց, հարկաներ զնոսա մեծապէս. եւ գերեր զբազումսն ի նոցանէն, եւ մնացորդացն դներ հարկս, եւ առնոյր պանդանդս:

ԳԼՈՒԽ ԺԲ.

1 Յաղագս Արծխայ:

2 Հարկաներ զերկիրն Արծախայ մեծաւ պատերազմաւ, գերեր զբազումսն ի նոցանէն. եւ զմնացորդացն առնոյր պանդանդս, եւ զմնացեալսն ի հարկի կացուցաներ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Յաղագս Աղուանից:

2 Առնէր պատերազմ ընդ երկիրն Աղուանից. հարկաներ զնոսա ի հարուածս անհնարինս: 3 Եւ թափէր ի նոցանէ բազում զաւառս, զոր հատեալ էր նոցա ի նոցանէն. զՈւտի, զՇակաշէն եւ զձորն Գարդմանայ, զԿողթ եւ այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք զաւառք¹: 4 Եւ զԿուր գետ՝ որպէս եւ յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից եւ ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին. եւ ի գլխաւորացն բազումս սպանանէին. եւ զմնացորդսն ի հարկի կացուցանէին, եւ պանդանդս ի նոցանէ առնուին:

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 Յաղագս Կասբից:

2 Ապա ինդրեր զվրեժն մեծապէս սպարապետն Մուշեղ յերկրէն Պարսից եւ ի Փայտակարան քաղաքէ, փոխանակ զի եւ նոքա նշկահեցին ստեցին արքային Հայոց: 3 Հասեալ, զբազումսն ի նոցանէ գլխով պատուհաս առնէր սպարապետն զաւրավարն Մուշեղ. զբազումսն ի նոցանէ գերեր, եւ զմնա-

1 Օրինակ մի յաւելու՝ բազումք